# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Սավա ՍՊԸ-ն ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 40 | Թարմ և ոչ հասունացած, տարբեր տեսակի միջին չափերի: Չափը որոշվում է լայնական կտրվածքի առավելագույն տրամագծով, որը պետք է լինի մոտ 40-50 մմ-ից ոչ պակաս: Արտաքին տեսքը` չվնասված, բարորակ (չի թույլատրվում փչացման նշանների առկայություն, որի հետևանքով մթերքը դառնում է օգտագործման համար ոչ պիտանի), մաքուր, առանց որևէ նկատելի կողմնակի նյութերի, առանց վնասատու միջատների կողմից վնասված տեղերի, առանց ոչ նորմալ մակերևութային խոնավության, առանց որևէ կողմնակի հոտի և (կամ) համի, ՀՍՏ 351-2013 կամ համարժեք: Անվտանգությունը փաթեթավորումը, մակնշումը և նույնականացումը` համաձայն Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 880 որոշմամբ ընդունված «Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ N 021/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 881 որոշմամբ ընդունված «Սննդամթերքը` դրա մակնշման մասով» (ՄՄ ՏԿ N 022/2011), Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի թիվ 769 որոշմամբ ընդունված «Փաթեթվածքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 005/2011) տեխնիկական կանոնակարգերի: Մատակարարումն իրականացվում է առնվազն շաբաթական մեկ անգամ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցներով: Մատակարարումն իրականացվում է աշխատանքային օրվա ժամը 08:30-09:00 ընկած ժամանակահատվածում` համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով: Սննդամթերքի փոխադրումը տրանսպորտային միջոցներով իրականացնելիս պետք է ապահովել հետևյալ |

| | |
|---|---|
| | պայմանները` տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի կառուցվածքը պետք է ապահովված լինի աղտոտումից, կենդանիների, այդ թվում` կրծողների և միջատների ներթափանցումից, տրանսպորտային միջոցների բեռնային բաժանմունքների և բեռնարկղերի ներքին մակերևույթը պետք է պատրաստված լինի լվացվող և ոչ թունավոր նյութերից և պետք է պարբերաբար ենթարկվի անհրաժեշտ մաքրման, լվացման և ախտահանման: Առաքողները պետք է ապահոված լինեն սանիտարական արտահագուստով (խալաթ և ձեռնոցներ): Տեխնիկական բնութագրին կամ մատակարարման պայմաններին անհամապատասխանություն ի հայտ գալու դեպքում անհամապատասխանության շտկման ժամկետ է սահմանվում 60 րոպե: Մատակարարումը կատարվում է Վաճառողի միջոցների հաշվին` համապատասխան մանկապարտեզներ նշված հասցեներով` ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2017 թվականի «Սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցների համար սանիտարական անձնագրի տրամադրման կարգը և սանիտարական անձնագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 85-Ն հրամանով հաստատված սննդամթերքի տեղափոխման համար նախատեսված տրանսպորտային միջոցներով: Ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից, հաշվի առնելով տարվա ընթացքում մանկապարտեզ հաճախող երեխաների փաստացի թվաքանակը և ֆինանսավորումը կիրականացվի փաստացի մատակարարված ապրանքի մասով: Գնորդն իրավունք ունի յուրաքանչյուր մատակարարված ապրանքի(ների) փորձանմուշը ուղարկել լաբորատոր փորձաքննության: Լաբորատոր հետազոտությունների արդյունքում բացասական եզրակացության ստացման դեպքում` ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

САВА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 40 | |